

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

—

Հա Հոկի ծովամարտը :

Պատերազմական բաղդի մէջ կան պարտութիւնք որ յաղթութեանց հաւասար դուռզութիւն և միանգամայն պարծանք կ'ազդեն պարտելոց սիրտը , որչափ որ թշնամեաց շատութիւնը , դիպուածը և ուրիշ մարդուս կամքէն կախմունք չունեցած հանգամանքները յաղթող կ'ընեն միւս կողմը : Այսպիսի էր մեր գարուս մէջ Ա ագերլոցի պատերազմը : Այսնկա Գաղղիա նոյն դժբաղդ պատերազմական արկածից հանդիպեցաւ Ա ա Հոկ ըստած հրուանդանին քով , որուն ծովային գեղեցիկ պատկերը հօս կը տեսնուի :


Գաղղիոյ Ա ու գովիկոս ԺԴ թագաւորին զՀ Յակոբ Բ Անգղիոյ գահը հաստատելու ձիգը երկու կերպով կը մեկնուի . նախ ընտանեաց վրայ սաստիկ սէր ունենալուն , և երկրորդ , յաջող ելքը կրնար Գաղղիոյ իշխանութիւնը աւելցընելիր նախանձորդին վրայ : Ա ան զի Յակոբ յաղթական փառօք մտնելով ՚ի Ա սնտրա Ա ու գովիկոսի զինուց օգնութեամբը , իր Ա պրոլոս եղբօրը պէս խոնարհ հապատակ և թերեւս պատկեալ թոշակառու մը կ'ըլլար իր պաշտպանին և իշխանին՝ որուն բոլորավին գերի պէսք էր որ ըլլար , որովհետեւ անոր պարտը կան էր իր թագաւորական գահը նորէն բազմելէն ետև , նաև զինքը աթոռոխն վրայ հաստատուն պահողը ինքն իսկ Ա ու գովիկոսն իրնար սեպուիլ : Հաւանական կ'երենայ կարծելը որ բաց ՚ի Ա ու գովիկոսի ունեցած թշնամութենէն ընդդեմ Գաւիկելոս ԳԵ , առ եղաւ զլխաւոր պատճառը այսպիսի հնարք մը բանեցընելու Անգղիոյ իրաց վրայօք , և մոածեց գիւրին կերպով զՀ Յակոբ Բ նորէն հաստատել Անգղիոյ աթոռը :

Յակոբ Բ հալածական փախչելով 1688 ն յեղափօխութեան ժամանակ որ Անգղիոյ համար փառաւոր չէր , բայց օգտակար , հանդերձ գշխոյիւ և որ

գովիքը եկաւ ապաւինեցաւ Գաղղիա , ուր որ խիստ ազնուական և առատաձեան հիւրասիրութիւն գտաւ : Ա ու գովիկոս գշխոյին դիմաւորելու ատեն ըստաւ . “ Տիսուր ծառայութիւն մըն է զոր կ'ընեմքեզի , բայց յուսամոր շուտ կը փոխուի ասիկայ մէծ և երջանիկ ծառայութեան մը . . . : Այ ըրած ընդունելութիւնը որչափ ալ մեծածախ էր՝ բան մը չերեցաւ , Յակոբ Բ համար ըրած պատրաստութեան քով աւաջին արշաւանքովը յԱռլանտա : 13 մեծակառոյց նաւով նաւատորմիղ մը , ուր ամէն տեսակ զէնք և հրազէնք և պատերազմական գործի զետեղեց , Պըրէսթի նաւակայից մէջ կը սպասէր ասիշանին : Ա ու գովիկոս Աէն-Աէրմէն գնաց (մայիս 1689) հրաժարական ողջոյնը տալու . հօն իբրև վերջին ընծայ իր զրահը տուաւ , և համբուրելով ըստաւ անոր . “ Ամ լաւագոյն փափաքս քեզի համար աս է որ մէյմըն ալ մէկ զմէկ շտեմնենք . . . : Այ պատերազմիս ժամանակ ուրիշ երեք նաւատորմիղ ալ հանեցին , և մեծ փառաց հասուցին Գաղղիոյ նաւական զօրութիւլ . Ա անշի նաւահանգիստը լեցուեցաւ գաղղիական յաղթող նաւօք . Ա ու րվիլ , Շ ա թօ-Ա լընեօ և ա՛ Ա սթրէ իրենց արիութիւնն ու ճարտարութիւնը թափեցին Անգղիացւոց և Հոլանտացւոց վրայ , որ բոլորովին ընկճեցան , և Ա ու գովիկոս քիշ մը ատեն իշխող էր ծովու :

Յակոբ Բ բանի չկրցաւ բերել Գաղղիային առած օգնութիւնները . Ա ապօյնի պարտութեամբը , ուր յաղթող հանգիստացաւ Գաւիկելոս ԳԵ , բոլորովին լքաւ (1690) : Ա ստի գարձաւ իսլանտային Գաղղիա , և թողուց իր հակառակորդը որ նորանոր յաղթութեք իր գահը հաստատէ : Ա վիշ ունեցած քաղաքները բոլորն ալ հետպհետէ Անգղիոյ թագաւորին ձեռքն անցան , որոնց մէջ էր նաև Ա իմէրիք :

Օ արմանալին ան է որ Ա ու գովիկոս ԺԴ թէպէտ և այսպիսի գժբաղդութեանց մէջ ինկած , և նաև ան ատեն ձանր պատերազմի ձեռք զարկեր էր



ընդդեմ բոլոր Եւրոպայ, բայց ուզեց նոր փորձ մըն ալ փորձել Հակոբ Բին բաղդը փոխելու համար, վստահանալով անոր թելադրութեանցը և խրախուսանաց վրայ, և թէ պիտի կարենան 20 հազար հոգւով ցամաք ելել յաջողութեամբ (1692): Շերպուրի և Հոկի մէջ հաւաքուեցան զօրաց բանակը, և 300 նաւ զինուց և հրազինուց պատրաստ կեցան միատեղ Անշի ծով եզերքները: Իյս բանակիս հրամանատարութիւնը Պելքֆոնտ սպարապետին յանձնուեցաւ, Հակոբ թագաւորին ձեռքին տակ: Իոյն միջոցին երկու նաւատորմիղ կը պատրաստուէր զօրքը Ինգղիա հանելու մտքով. մէկը Պրէսթի նաւակայքը ընդ հրամանատարութք փոխանակի ծովակալին Պառվիլեայ, իսկ մէկալը Պառլոն՝ տ' Խաղըէ կոմին հրամանատարութեամբը: Պաժազդաբար աս վերջինս Շիպրալդարի նեղուցը անցնելու ժամանակ յանկարծակի սոսկալի մըրկի մը հանդիպելով, նաւին երկուքը ծովեզերքը ինկան, իսկ մէկալ նոնք ցրուեցան, որով վերջապէս չկըրցաւ ըստ ժամանակին Պրէսթի նաւատորմին հետ միանալ:

Իայց Պաղպիոյ նաւահանգիստները երեցած շարժմունքը, և ծովեզերքները կազմուած բանակներուն պատճառաւ Ինգղիոյ արքունեաց մէջ մեծ շփոթութիւն ինկաւ. ուստի շուտ մը հրաման տրուեցաւ Պարսսէլ ծովակալին որ մեծ արագութեամբ մը ծով ելլէ: Ի՞մէն զօրութիւնքը ժողվեց, որոնց հետ միացաւ նաև Հոլանտացւոց նաւատորմիղը, և յաջող հովով դէպ 'ի Պաղպիա նաւարկեց, որուն ձեռքին տակը կային 99 պատերազմական նաւ, բաց 'ի Քրէկտն ըստածներէն և հրձիգ նաւերէն:

Իյլ քամին հակառակ էր Պառվիլի, որով մնաց Պրէսթի նաւակայքը: Ուդովիկոս ԺԴիմանալով որ Ինգղիացիք Ճամբայ ելէր են, հրամայեց անոր որ անմիջապէս դիմացնին պատերազմի ելլէ թէ տկար և թէ զօրաւոր տեսնելու որ ըլլայ դիմացինը: Հակոբ Բյոյս կուտար որ Ինգղիացւոց նաւատորմին

մէջ կրնայ գասալիքութիւն ալ հանդիպիլ: Ի՞ս հրահանգաց հետ՝ Պաղպիոյ թագաւորէն ալ ինքնագիր քաջալերական թուղթ մը եկեր էր. Պառվիլ ելաւ Պրէսթին, և հասաւ Հոկին խորունկ ծով եղած տեղը 44 նաւով, որ թշնամեացմէ շատ նուազ էր: Պառվիլ թագաւորին ցըցուց իր նաւերուն նուազութիւնը, և Հակոբ Բին ակնկալութեանցը վրայ իր ունեցած անվստահութիւնը, որով շատ անգամիշաբութիւնը իրեն աղեկ տեղեկանալով հրաման խրկեց իրեն որ պատերազմը յապաղեցընէ, շատ ուշ էր, և աս լուրը բերող տասը պզտիկ նաւերուն մէկն ալ Պառվիլին չհասաւ: 1692ին մայիսի 29ին երկու նաւատորմիղները դիմացէ դիմաց ելան. Պառվիլ դիւրաւ կրնար անհաւասար պատերազմէ մը խոյս տալ, ուր որ նաև հովն ալ իրեն դէմ կը փչէր. բայց իրեն եկած հրամանները բացարձակ էին, և աս դրժուարութիքը խորհրդի հանելէն ետեւ, զամէնքը իրենց տեղը խրկեց որ թշնամեաց դէմ վազեն: Ինքը ծովակալը թագաւորական Արէդակին արտայական ըստած 106 թնդանօթով նաւուն մէջ պատերազմական խմբին մէջ էր: Պաշնակցաց նաւատորմիղը իր առագաստները վարառաւ կեցաւ, որպէս զի հասնին Պաղպիացիք: Արբոր հրացան մը հասնելու չափ մօտեցան, առաւօտեան 10ին անլուր պատերազմ մը սկսաւ երկու կողմէն. Պաղպիացւոց ամէն մէկ նաւը թշնամեաց երկուքին՝ երթեմն իրեքին հետ կը կռուէր: Պարսափելի էր Ինգղիացւոց ցուցըցած կատաղութիւնը ծովակալին նաւուն վրայ. բայց ինքը այնպէս Ճարտարութեամբ նետեց թնդանօթները որ երկու անգամիթշնամեաց երեք նաւը, ամէն մէկը 100ական թնդանօթով, ետ ետ մզուեցան, որոնցմէ մէկը այրելով ծովը ընկղմեց, միւսն ալ երկինք հանեց: Պառվիլի դիրքը այնչափ դժուարին էր, որ վերջապահ նաւուց երրորդ բաժինը չկրնալով իր տեղն առնուլ, Ինգղիացիք զրաւեցին, որպէս զի

երկու կրակին մէջ պաշարեն : Դովիա . կալին օգնութիւն եկան ուրիշ շատ նա . ւեր ալ , և պատերազմը վերջի աստի . ճան կատաղութեան հասաւ : Դուրվիլի տեղակալքը և նաւային գնդապետները իրենց արիութեան և հանձարոյն հա . մեմատ օգնեցին անոր : Քիչ մը ատեն թանձր մառախուղի պատճառաւ պա . տերազմը դադրելով , լուսնի լուսով նո . րէն կատաղաբար սկսան երկու կող . մէն պատերազմը : Ի հաւոր անընդհատ թնդանօթաձիգ գնտակներու մէջէն , Դուրվիլի երկու նաւերը ազատեցան թշնամեաց հինգ հրածիգ նաւերուն ձեռքէն որ ետևէ ետև վրանին կը յար . ձրկէին : Այսպիսի աննկուն դիմակա . լութենէ յոգնելով՝ Ինգղիացիք գնացին բուն իրենց նաւատորմղին հետ միա . ցան , և ուզեցին Կաղղիացւոց նաւե . րուն մէջէն յանդգնութեամբ անցնիլ երթալ . բայց աս յանդգնութիւնը ծան . րագնի եղաւ իրենց . վասն զի թշնա . մեաց նաւերը ծովեզերքին մօտենալ . նուն պէս՝ Կաղղիացիք մաղ դարձուցին զանոնք իրենց թնդանօթներովը . որով պատերազմն ալ գիշերուան 10th դա . դրեցաւ : Օօրաց կորուստը գրեթէ երկու կողմէն ալ հաւասար եղաւ , և դաշնակցաց նաւերն ալ Կաղղիացւոց նաւատորմղին պէս անպիտանացան :

Դուրվիլի ուրիշ բան չէր մնար բայց նահանջել իր նաւատորմիղը , և աս յի . շատակաց արժանի պատերազմին անու . նը իր փառացը կը հաւասարէր : Ին . գղիոյ ծովակալը Կաղղիացւոց 13 նաւը այրեց Հէրապուրի և Հոկի անպատրս . պար նաւակայից մէջ , վեց հատ ալ ա . նոր փոխանորդ ծովակալը այլ և այլ կողմերը :

Իւլորդ է զուրցելը թէ Դուրվիլի համբաւն ամենեին չպակսեցաւ այս . պիսի պարտութեամբ մը որուն պատ . ճառը միայն թշնամեաց կրկնապատիկ բազմութիւնը և պատրաստութիւնն էր : Խրբոր լսեց Լուգովիկոս ֆԴ դըժ . բաղդ պատերազմին լուրը , առջի խօս . քը աս եղաւ . “ Դուրվիլ ապրեցաւ ար . դեօք : ” աւ կրնանք գտնել . բայց իրեն

պէս ծովակալ մը դիւրաւ չպտնութիր . : Հաջորդ տարին Դաղղիոյ Մարաջախտ եղաւ Դուրվիլ . և թէպէտ արդար վար . ծատրութիւն մըն էր ասիկայ . բայց Դուրվիլ կարգէ դուրս չափաւորութք մը գրեթէ ամբցաւ այսպիսի պատիւ ընդունելուն վրայ : Հոկի պատերազմէն վերջը ինքն իսկ Ինգղիոյ ծովակալը թուղթ մը գրեր էր ուրախակցելով ի . րեն արիասիրտ քաջութեամբ եղած պատերազմի մը մէջ ցըցուցէր էր , և այնչափ քաջութեամբ անհամեմատ կը . ռուոյ մը դիմացէր էր : Հոկի պատե . րազմէն տարի մը ետքը 1693th յունիսի մէջ նոյն թշնամեաց վրայ Աէն-Ռ էն . սան ըսուած հրուանդանին խորունկը՝ փառաւոր յաղթութիւն մը կանգնեց Դուրվիլ , որով առջի պարտութիւնը մոռցընել տուաւ :

Լուղովիկոս ԺԶին վարքն ու մահը ¹ :

Հոկտեմբերի 7th իրիկուան ժամը 6th խորհրդարանի խուցը կանչուեցայ , ուր որ 20th չափ քաղաքական պաշտօ . նեաներ կային . ասոնց նախագահ նըս . տած էր Անհիւէլ , որն որ աննշան պաշտօնէ մը բարձրանալով , ազգային ժողովքին անդամ եղած էր : Օ ինքը տեսնելով զարմանքէս յանկարծակիի գալով խուզեցայ . հրամայեցին որ մէ . կէն նոյն իրիկունը թագաւորին ունե . ցած պատուանշանները քովէն առնում ինչպէս սրբոյն Լուգովիկոսինը , և ու . կեգեղման ² պատուանշանը : Իսկ Հո . գւոյն սրբոյ նշանը արդէն թագաւորը չէր դներ , վասն զի առջի ազգային ժո . ղովքը անոր գործածութիւնը խափա . ներ էր : Այս իրենց ըսի որ չեմ կրնար աս բանս ընել , և ինծի չիյնար խորհրդարանին հրովարտակը թագաւորին ի . մացընել : Իս պատասխանս տուի , որ . պէս զի ժամանակ վաստըկիմ ու թա .

¹ Տես . Հա . ԺԳ . երես 329 . Հա . ԺԳ . եր . 170 , 240 , 320 , 368 . ԺԵ , 7 , 46 , 123 , 156 :

² Իս . Տօսոն ճ' օրո .